ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Երկոտասաներորդ դար:

ԺԲ. Պատկեր. ամ տեառն 1100–1199

Ստեփաննոս Մանուկ:
Յովհաննէս Սարկաւագ:

Արձանական 'ի Ս. Գրիգոր վկայասէր (անյայտ):
Ա. Մեկնութիւն տումարի և յաղագս անկիւնաւոր թուոց (թերի): — Բ. Պատմութիւն Հայոց (անյայտ): — Գ. Դատաստանագիրք. (անյայտ): — Դ. Ճառ քահանայութեան*: — Ե. Յաղագս պատկերաց ընդունելութեան: — Զ. Յաղագս շարժման երկրի: — Է. Ներբող 'ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ*: — Ը. Ներբող 'ի Թարգմանիչս: — Թ. Ներբող 'ի Ս. Ներսէս: — Ժ. Ներբող 'ի Ս. Ղևոնդեանս: (երեք յետին ներբողքն վարդապետիս չեն տակաւին յայտնեալ): — ԺԱ. Յաղագս իմաստասիրութեան բան համառօտ: — ԺԲ. Քերթուած 'ի Սարեկիկն*:[1] — ԺԳ. Աղօթագիրք*: — ԺԴ. Աստուածաբանական բանք: — ԺԵ. Ճառ ընդդէմ նեստորականաց: — ԺԶ. Շարականն Ղևոնդեանց Պայծառացան և այլ մանր երկասիրութիւնք:

Գրիգոր Պահլաւունի:
Ներսէս Շնորհալի:

Շարականք ինչ և Թարգմանութիւնք:
Ա. Յիսուս որդի*: — Բ. Բան հաւատոյ*: — Գ. Յաղագս երկնից և զարդուց նորա*: — Դ. Ներբող Ս. Խաչի*: — Ե. Մաղթանք առ Ս. Հրեշտակս*: — Զ. Ի Սողոմոն, կամ Յիշատակարան գրոցն Սողոմոնի*: — Է. Թուղթք*: — Ը. Խրատք*: — Թ. Վիպասանութիւն*: — Ժ. Առակք կամ Առեղծուածք*: — ԺԱ. Ողբ եղեսիոյ*: — ԺԲ. Շարականք. զՎառ ձայնն Աւագ օրհնութեան, զԵօթանասնիցն, զՆինուէացւոցն, զԱղուհացից ամենայն կիւրակէիցն, զԾաղկազարդի հարցն. զՀոգւոյ գալստեան չորս պատկերսն. զՎարդավառի զերկու պատկերսն. և զՓոխման զերկու պատկերսն. զՅովհաննու դՁ հարցն. զՄարգարէից դՁ հարցն. զՀրեշտակապետացն, զՆորահրաշն Վարդանանց, զՂևոնդեանցն, զԱյսօր անճառն, զՆորոգողն, զԱստուած անեղն, զԱրարչականն, զԱրևագալի չարականսն, զՕրհնեմք զքեզն. զՆայեաց սիրովն, և զի քէն հայցեմքն, և ըստ ոմանց՝ զտուրբ Յակոբայն ևս՝ սորա է ասացեալ: — ԺԳ. Հաւատով խոստովանիմ*: — ԺԴ. Ատենախօսութիւն*: — ԺԵ. Ընդհանրական Թուղթ*: — ԺԶ. Թղթակցութիւնք ընդ Յոյնս: — ԺԷ. Ներբող Հրեշտակաց*: — ԺԸ. Պատճառ և Մեկնութիւն բարձրացուցեալ*: ԺԹ. Մեկնութիւն բանին «Ամենայն չար տանջելի»: — Ի. Մեկնութիւն Մատթէի*. մինչև 'ի բանն «Մի համարիք եթէ եկի լուծանել»: — ԻԱ. Մեկնութիւն կաթուղիկեայց: — ԻԲ. Մանր երկասիրութիւնք, Տաղք, Գանձք և այլն:

Իգնատիոս վարդապետ:
Սարգիս վարդապետ:

Մեկնութիւն Աւետարանի Ս. Ղուկայ*:
Ա. Մեկնութիւն կաթուղիկեայ թղթոց*: — Բ. Համառօտութիւն նորին:

1. Տես Բազմավէպ 1847 երես 221: